



ՕՐԱԳԻՐ ՏԱՍՆՈՐԵԱՅ

Ա. ՏԱՐԻ

1861

Կը հրատարակուի Ամսոյն 12ին 20ին եւ վերջինը :
Վեցամսեայ գինն է 60 դամեկան ԿԱՆԻՆԿ :
Ուզողը կրնայ ստորագրել , Պոլիս Զեմեքիյի խանը վերի
յարկը Թ. 4-5 Խեթաշի սենեակը . եւ Մերձանը Մար-
գարեան Արգոյ Յարութիւն աղայի գրատունը :
Մտորագրութիւնը 1861 Յունուար 10ին կսկիւնի :

Առգի յոսանին ամբողջ 12 քիւր ուզողը 30 դամեկան պի-
տի մարի :
Անհաւան լաճու մը հաւաք ըլլալու ծանուցմանց հա-
մեժառուապէս սակարկութիւն կըլլայ :
Ո եւ իցէ նամակ եւ գրութիւնք Խեթագրին պիտի ուղ-
ղուի :

10 ՅԱՆՆԻՍ

ԵՐԵՎԱՆԻ ԶԵՐԱՆ

ԹԻՒ 28

Ե. Ջ. Գ. Ե. Յ. Ի. Ն.

ՋԱՆԱՋԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

Ի .

Մըկեւեանիս 26^{րդ} Թուոյն մէջ այս վերնա-
գրով սկսած յօդուածնուս վերջերք՝ այլաբանա-
կան ձևերով բրած քանի մը խօսքերով ինչ
որ կ'ուզէինք հասկըցունել մեր բարեմիտ ըն-
թերցողացը նէ՝ յուսամք Թէ՝ ըստ բաւականի
հասկըցողցինք :

Արդարեւ ունէինք դեռ ևս հասկըցունելիք
կէտեր , բայց ըստ պահանջման պարագայից այժ-
միկ զանոնք զատ ու յարմար ատենի՝ պահելով
այս անգամ մէկ ուրիշ և կարեւոր խնդիր մը
ձեռք առած անոր վրայ պարզապէս և ընդար-
ձակ կերպիւ մը խորհրդածելը արժան կը տես-
նենք :

Յայտնի է Թէ՝ բազում ժամանակէ հետե
Հայ օրագիրներէ ոմանք Հայ Աղերին դէմ ա-
պօրինաւոր և անարժան կերպիւ խօսիլը իրենց
անհաւանք և անհարգութիւն մը համարելով
գրեթէ դժբաղդաբար ամեն Թիւերնուն մէջ
քիչ շատ այս ցաւալի նիւթէն կը տեսնուին . Եւ
այս կէտիս այնքան չափը անցողցին որ՝ բովան-
դակ Հայ եկեղեցականները , և զանոնք ըստ օ-
րինի յարգող բազում Հայ Ժողովուրդը իրենց
ատելեալ ըրած մինչև անգամ Հռովմէական
Հայ և մեր պաշտօնակից եղբայրը Պէճմուան
այս բանիս դէմ գրիչ գործածելու բռնաբարե-
ցին : Եւ դեռ չեմք գիտեր Թէ՝ իրենց այս ան-
վայել ընթացքը եթէ որ շարունակելու ըլլան ,
ի՞նչ չար հետեանքներ յառաջ պիտի բերէ , և

ո՛ր տեղերէն ի՞նչ ձայներ պիտի յարույանէ
. Եպերելի ընթացք այս կերպ Հայ օրա-
գրաց ողբալի՜ վիճակ անմեղ Ազգիս Հա-
յոց

Ի՞նչ անմտաբար և անխոհեմաբար վարմունք
մ'է այս օրագրաց վարմունքը , որ առանց յաջ
և յահեակ հայելու , առանց անցեալն և ապա-
գան խորհելու , միայն ներկայիւ իրենց այս կերպ
վարմունքը յառաջ տանելու էր ջանան , և օր օ-
րի՝ կը սաստկացնեն : Չէ՞ն խորհիր անգամ մը
այս էր Հայ պարոն օրագիրները Թէ՝ իրենց այս
մտասկար վարմունքէն ժամանակին ի՞նչ ցա-
ւալի հետեանքներ պիտի ծագին Չէ՞ն
մտածեր այս իմաստակները , որ այն կերպ դը-
րով Թիւներէն օր մը աղգին դէմ ո՛րպիսի չա-
րածնունդ խորհուրդներ պիտի յառաջ գան .
որ ինչպէս ցաւալի է ըսելն , այժմէն օր քան զօր
ատենց նշանները յայտ յանդիման տեսնուելու
վրայ են : Օրինակի աղագաւ (Թողումք երբե-
մըն երբեմն մեր բարեկամ տները զիշերները մինչ
ի լոյս այս բաներուն վրայ իրենց հետ խօսքով
վիճաբանելիս) ըսենք Թէ այսօր Սէճմուան
եղաւ յիշեալ օրագրաց այս անհարգ ընթացքէն
զրգուեալ մարդասիրական զգացմամբ այս մասին
« Չընէ՞ր զիտեղ խօյն ու կեռ » ըսուածին հա-
մեմատ զմեզ ալ միատեղ առնելով՝ իւր 399^{րդ}
Թուոյն միջոցաւ յետ բազում վշտալից խօսքե-
րէն , անոնցմէ (Հայ օրագիրներէ) լսեցինք (Հայ)
Եպիսկոպոսներու , Արդապետներու ու Քա-
հանաներու ընդդէմ համեստութեան և պար-
կեշտութեան վարմունքները՝ անոնցմէ լսեցինք ,
գողըթիւն , լիտութիւն , արիւն , ժանտ , խար-
դախ , և ասոնց հետ միատեղ շատ մը մարդու

ստամոքսը պղտորելու հանգամանք և խլրտումն
 . . . ր սաւ, որ զստոնք հրապարակաւ ըսող
 Մէծմուսնի դարձեալ սերունդով Հայ բլալով
 այս մասին անոր ըսածները այնքան չի վնասեր
 զՀայոց ազգը. հասկա որ այն օրագիրներն* ի
 բնեց այս ուղղակի կրօնի և ազգի ամենամիտասակար
 վարմունքնին առանց յետս կոչելու նոյն ընթաց-
 քով իրակերպ շարունակելու ըլլան, ի՞նչ կը
 կարծեն չի՞ պիտի ըլլայ որ վաղն ալ Հայ ազ-
 գին հինաւուրջ ոխերիմ և օտարագրի թշնա-
 միները, զստոնք իբրեւ ստուգաբանեալ եղելու
 թիւններ մը յանիրաւի ձեռք առած՝ և իրենց
 գրչին ծայրը անցուցած՝ անոնցմով ընդհանուր
 ազգին կարեւոր սիրտը անբժշկելի կերպիւ հրա-
 պարակաւ խոցեն . . .

Զի՞ պիտի ըլլայ որ Հայոց ազգը այն ազգե-
 րուն առջև արդէն թշնամեաց թեւադրութեամբ
 բամբաստուած, նախատուած, և մինչև ան-
 դամ հերքելու, հերքող ճանչցուած յամենայնի
 անմեղ ու աղանձաբար Մարտիկոս այս կերպ
 գրութիւններէ պատճառած՝ նորանոր բամբաս-
 ուելուն, նախատուելուն ենթակայ եղած, և այն
 150 էն աւելի աղանդներէ զերծ և անարատ
 մնացող Քրիստոսի զննութեալ եկեղեցւոյն
 Լուսաւորչական մասը, յիշեալ ազգաց դիմաց
 ոչ միայն հերքելու և հերքող այլ և անոր նիւ-
 թական եկեղեցին պղծութեանց և անօրէնու-
 թեանց գործարան մը համարուին:

Այո, չի՞ պիտի ըլլայ . . . բայց ի՞նչ կ'ը-
 սենք, արդեօք այս կերպ խօսելով միթէ ըրած
 տրամաբանութիւնն իրաւ, անտեղի, և կամ
 խառնուի մը կասկածա՞նք կը համարին այս լու-
 սաւորեալ պարոնները, երբ 1500 տարիէ ՚ի վեր
 Հայ ազգին վրայօք թշնամօրէն ու զրպարտա-
 կան կերպիւ զրուցուած այնքան անտեղու-
 թիւններն դեռ յանդգնաբար բարձր ՚ի գլուխ
 պարծենցած առեն, իրենք կարծես թէ այն ի-
 ըողութիւնները Մարտիկոս վրայ իրօք եղած ըլլա-
 լուն հաստատութիւն մը տալու մտօք՝ միակերպ
 Հայ կղերը (բաց ՚ի մէկ կամ երկուքէն, ան ալ
 չենք գիտեր ինչ պարտաւոր) անբէն, անգութ, քաշա-
 ւոր, խաղաղ, խաբէբայ, քաղ, յաղորդակէ, դաւն, մար-
 նի, պնդ, հրէշ, մարդասպան, սխալ քաղաք, արգի,

անոռ, որդոց խախտող, քրտնիշ, կոբոբոց,
 շոթորոյ, արագեթ, քաղաքիշ, և օրնաւուց . . .
 և այլն և այլն և այլն կը քաղաքէն*:

Ահա ներկայիւ այս ստոխձան վատութիւն-
 ներ, կեղծութիւններ երբ Հայ կղերին վրայ ա-
 նիրաւաբար զրուցուելու որ ըլլայ, արդեօք չենք
 գիտեր թէ Հայոց նկատմամբ կրնայ մի ըլլալ
 որ մեր ապագային համար ըրած դիտողութիւն-
 ները սխալ կամ անտեղի կասկածանքներ եղած
 ըլլան. ըստ որում շատ առեն Հայոց համար զը-
 լուցուած գէշ բան մը դիւրաւ կ'ընդունուի,
 եղուած սուտ մը՝ կը հաստատուի, անտեղի զը-
 պարտութիւն մը՝ կը հաւատացուի, վերջապէս
 այս բաներով օտար ազգաց կողմէն գէշ համար-
 մունքներ ստանալով, իւր գովելի և բնական
 ձիրքերը միշտ և հանապազ անյայտութեան մէջ
 կը թաղուի, և այս ալ իւր ճակատագիրն է
 ըսեմք: Ահ երբ պիտի ըլլայ որ այս գիրը Հայ
 սերունդին ճակտին վրայէն պիտի խալառ ան-
 հետանայ . . .

Այս պարոն օրագիրները, անգամ մը չե՞ն
 յիշեր թէ՛ ասկէ 1400 տարի առաջ Քաղկե-

* Եթէ որ կ'ուզեն ընթերցողք, պատրաստ եմք
 ասոնց անդերը ցուցունելու, և չենք գիտեր թէ
 աշխարհի վրայ բաց ՚ի ասոնցմէ վատութիւն մնա-
 ցե՞ր էր որ այս Հոգեւոր պաշտօնէից վրայ չի զը-
 րուցուեր այս պարոն օրագիրներու կողմէն: Ուրեմն
 ալ վայրկի մի հարկ չէ՞ որ արթննան Հայ եկեղե-
 ցականները խոհեմութեան քունէն, ու լսեն իրենց
 անմեղ եղբարցը վրայօք արժան դատուած այս բան
 վատաբար արտոյտները: Յերաւի այսօր այս տիտ-
 ղոսները միայնակ Պօղոսին, Նիկողոսին, Գարբիէլին,
 Յովնանէսին, Յաղէոսին, Վահակին, Սբրահամին,
 Յակոբին, Վսեփանոսին, Մատթէոսին, Իգնատիո-
 սին, Վարդիսին, Ամբրոսիոսին, Խորէնին, (և դեռ
 մեզի անծանօթ ուրիշ անուններ ալ կան նէ թող երե-
 ւակը յայտնէ Սրեւեկեանին օգնելու նպատակաւ), և
 ըստ մեջտիսեցանի Հայ եկեղեցականաց մեծ մասին
 համար է. սակայն վաղն ալ կարգը Գէորգին, Մը-
 կըրաբէլին, Ներսէսին, Եսայիին, և յիշեալ եկեղե-
 ցականաց մնացեալ մասին համար ըլլալուն տարա-
 կոյս չունիմք ըստ երեւութիւն . . .

Ուստի եթէ որ կ'ուզեն իրենց Ս. պատիւը պաշտ-
 պանել այն ստախոսաց և զրպարտաց գէտ, հի-
 մակուրէն գիտունուն ճար տեսնեն, եթէ ոչ՝ Եկե-
 ղեցական կառավարութիւնը սահմանադրական ըլ-
 լալով՝ ալ ժամանակը մօտեցաւ. որ այս պաշտօնը
 մասամբ մը լուսաւորեալ աշխարհականները վա-
 րեն. քանզի ունին այս բանը ընելու արտօնու-
 րին. որ ինչպէս երեկ գիրքեր արժանի է գո-
 չելներով հրապրեցին ՚ի կարգ Քաղաքայութեան,
 այսօր կամ վաղն ալ «բեն արժանի» գրելներով
 «կը լռեն» նոյն իշխանութեան: Ի՞նչ կը խօսի
 Սրեւեկեանը . . . Եկեղեցին է եկեղ. իրաւ. ժա-
 մանակը կը յայտնէ:

* Ներքէ մեզի Մէծմուսնի, մենք մեզէն զմեզ այս
 պիտի անարգ ընկերութենէ դուրս հանելով, այս
 կերպ նորաղանդի վայել ընթացքի մը հետեւին լի-
 սին կը մերժենք և յաւիտեան չենք ընդունիր:

այս Ենձին վրայօք՝ գրեթէ ընդհանուր Հայոց բերնէն բարձրաձայն գովեստներ կը լսէինք • և Երհիսարտուի Յակոբ Սրբազանին վերջին Պատրիարքութեան ժամանակ՝ Հայոց Պատրիարքաւ ընդհանուր ժողովն մը մէջ հրապարակաւ (որ ինչ բանի համար ըլլալը նորաձին Մեղուն չը գիտեր նէ, ծերունի Մասիսը աղէկ պիտի գիտնայ), երեք հարիւրի մօտ Ժողովականաց կողմէն մեծաբարբառ գովութեանց, և կեցցէներու արժանացած ըլլալը՝ նոյն իրիկունը Պօլմզափուլի կողմերը պատուաւոր ընտանիքի մը մէջ՝ (որ գործի մը պատճառաւ այն իրիկուն հոն հիւր եղած էինք) հոն գտնուող բազմականաց բերնէն լսելու պատիւն ունեցանք • որով առաջին անգամ այն տեղ Մասիսին և Մեղուն ըսածին համեմատ Սահակ վարդապետին ինչ պիտի լսէինք մարդ մը ըլլալուն իսկ և իսկ տեղեկացանք • Դարձեալ այն ժամանակները քանի մը հոգեւոր պաշտամունքներու մէջ տեսանք արդեամբ փառաւորեալ ի քահանայից, և ի ժողովողոց այս գրգռիչ անուանեալ Վարդապետը • Եւ այլ բազում բարձր գովեստներ որ ինչպէս ըսինք ի հեռուստ հազարաւոր հաւատարիմ անձանց բերնովը մեր ականջները կ'որոտային •

Վերջապէս երեք չորս տարիէ հետեւ ի մօտոյ գիտեցինք ընդհանուր Եզգին չափազանց սէրն ու համարումը յիշեալ Վարդապետին վրայ, որ ատեն որ հիմակուան հրապարակաւ բամբասող Մասիսն ու Մեղուն (կեղծաւորաբար) անոր բնակած տեղը կը մօտէին ու կելէին, և անոր արժանաւորութենէ ըստկարի պատիւներ կընդունէին •

Եւ ահա այն ատեն ամենայն մասամբ և յայտնի իսկ նկատեցինք Եզգին համայն Հոգեւորականաց ու մեծամեծաց՝ Սահակ վարդապետին անձնական արժանաւորութեանը վրայ ունեցած համակրութիւններն • Մասնաւորապէս ականատես եղանք, ասկէ երկու տարի առաջ Ս. Ծանդեանութեանը օրը Մայր Եկեղեցւոյ մէջ իր պատուոյն դէմ եղած պզտիկ մէկ անարգութեան մը համար՝ գրեթէ բովանդակ Հայ ժողովրդեան վեժխնդիր կենալը • Եւ նորին արգար իրաւունքին նոյն ժողովրդեան կողմէն սաստիկապէս պաշտպանուիլը նոյն հետացն տեսանք, ու այն անարգութեան սկզբնապատճառ ըլլող անձին ոմանց կողմէն յանդիմանուիլը հաւատարիմ աղբիւրներէ լսեցինք •

Ենցեալ տարի (երբ դեռ Երուսաղէմի խընդիրը լիք էր) Պարստու գէպքին ծագած օրը տեսանք հոն զինքը իբրեւ քաջ զորական մը՝ այն տրիւն և մահ սպաննացող կռուոյն մէջ նետուիլը իւր միաբանական ընկերը Լսայի Վարդապետին հետ, մինչդեռ այլք հեռուէն հանդիսակից կ'ըլլային վախերնուն •

Ի դարձին գերեզմանոցէն, Մեղուն ալ մեկտեղ ըլլալով, բոլոր հոն ներկայ գտնուող ժողովրդեան « կեցցէն Սահակ և Լսայի վարդապետներ » ի աղաղակները ականջօք լսեցինք, աչքով տեսանք • Եւ յաջորդ Վ. Պօլոյս մէջ գիտցածնիս, տեսածնիս ու լսածնիս՝ հիմայ տեսնեք նորին Ս. Երուսաղէմի մէջ ունեցած բարի և պատուաւոր համբաւը, ու անոնցմով Մասիսն ու Մեղուն յայտն վայրի այս Ենձին վրայօք ըսածներնին բաղդատեցք •

1858նին երբ Մեծապատիւ Միրճան Եմիրային ընտանեացը հետ Ս. Երուսաղէմ (ու ի տաղնացութեան պատճառաւ) գտնուած առնէնիս, Սահակ վարդապետի անունը՝ թէ Միաբանից և թէ համայն Եզգաց մէջ բարձր պատուանուններով կը յիշուէր • մինչև անգամ կրնամ ըսել ներկայ Պատրիարքին անունը այն քան չէր զուցուէր՝ որքան Սահակ Վարդապետի անունը • ինչպէս որ այս բանը ուրիշ անգամներ ալ յիշած եմք Երևելեանիս մէջ •

Ուր կերթայինք, ուր կը մօտէինք կելէինք և որ խանութներէ առուտուր կընէինք՝ մի և նոյն արտասանութեամբ գովեստներ կը լսէինք, այս գերապատիւ Հոգեւոր անձին վրայ • Եմենիւն մաքէս չելէր այն Մահմետական վաճառականի մը խօսքերը ի նպատակ Սահակ Վարդապետին, եր օր մը զմեզ գործի մը համար իւր տունը հրաւիրելով՝ երեկոյեան ճաշին ժամանակ յիշեալ վարդապետին անձնական կատարելութեանցը վրայ խօսք բանարով « երանի թէ, ըսաւ • ապուս (Հայր) Սահակը Միաբանութեան վրայ Պատրիարք ըլլար, այն ատեն տեսնէիր թէ Վանքը ունեցածէն աւելի ինչքան յարգ ու պատիւ կ'ստանար • քանզի, ըսաւ • բոլոր Երուսաղէմացիքս զինքը չափէն աւելի կը սիրեմք, իւր մարդասէր ու խոհեմ բնաւորութեամբ •

*Կարելի է Մասիսը այն ատեն այս դէպքը սխալ հրատարակելուն պատճառը՝ Սահակ վարդապետը մէջն ըլլալով անոր պարծանք մը չըլլալուն համար եր •

Թեանը համար . և իրօք ալ սիրուելու արժանի վարդապետ մըն է , ըստ որում բոլորեցունցս հետ քաղցր ու սիրով կը վարուի և այն , և այլ ըն . . . (Սեյքէք Սասիս , Մեղու , Երուսաղէմի մէջ մարդուն համբաւը) : Մոյն պէս օր մը Ս . Հրեշտակապետ Եփեղեցւոյն բակը քսանի մօտ վարդապետներու մէջ (որոնց հետ պատուաւոր աշխարհականներ ալ կային) յիշեալ վարդապետին կատարած մէկ գործին վայ խօսք ըլլալով , ամենուն բերնէն սա գիտողութեան արժանի խօսքերը լսեցինք , «եթէ որ , կըսէին , սա գործին մէջ Սահակ վարդապետը չի գտնուէր , նա գործին ձեռնամուխ չըլար , միւս գործին աշարջութիւն չընէր , և այլն և այլն , Անքը մեծամեծ մեծներ կը կրէր . . . » : Ա երջապէս որքան ժամանակ որ կեցանք հոն գրեթէ օր չէր ըլլար որ միաբանից մէջ Սահակ Ա արդապետի Միաբանասիրութեանը վրայօք խօսք չըլար : Արծեմք մեր այս ըստմանը Անքին կենդանի Միաբաններէն շատերը կը հաստատեն , որոնց հետ ամեն վայրկեան կը տեսնուէինք Թանգարանի մէջ , նա մանաւանդ Եսայի , Տիմոթէոս , Մարտիրոս և Սիմոն վարդապետներու հետ , որոնք իբր թէ այժմ Սահակ վարդապետը անխնայ կը բամբասեն եղեր : Արդե՞ք առաջքը : Ի հարկէ Մասիսին և Մեղուին : Առգեսնէ հաւատ . . .

Այս ալ դիմ ան սուտերուն կարգը , որ իբր թէ Միաբանութիւնը չի սիրեր եղեր Սահակ Ա արդապետը . . . : Յիշել արժան է հոս նաև Հռոմէական Հայոց կողմէն Եռաջնորդ գանուող Տ . Սերուբէ վարդապետին Յունաց Ս . Յարութեան Մեծաւորին , Լատինացւոց Արքեպիսկոպոսին յատուկ գովեստները , վասն մարդասիրութեան և քաղաքավարութեան Սահակ վարդապետի : Թողումք նաև պատուաւոր Հրեայի մը բարեմաղթութիւնները , որ ըրաւ յիշեալ վարդապետին համար լուսահոգի Յովհաննէս Պատրիարքին քով , ուր տեղ ներկայ էին վերոյիշեալ Մեծապատիւ Միրիման Ըմիրան , լուսահոգի Դաւիթ Եպիսկոպոսն ու կենդանի Արապետ Սրբազանը եւ այլք :

Ա երջապէս Երուսաղէմի մէկ դռնէն մեկալ դուռը , և անկէ Բեմէ , Եաֆա , Պերութ , Օմիւռնիա , Պօլիս և մինչև այս տարուան Փետրուարի 17րդ օրը Սահակ Ա արդապետի անունը Ըստուածախն , Ազգասէր , Խոհեմ ,

Հեղահոգի , Հաւատարիմ , Աշխատաւոր և գործունեայ պատուանդաններով : Հաշակեալ տեսանք ու լսեցինք . իսկ այս թուականէն ետքը . . . : Ի՞նչ , միթէ այն անունը յանկարծ մեռնելով այս նոր : Միթէ այն օրը մէկէն չ'մէկ փոխուեցաւ ըսենք անոր այնչափ ազնիւ բնաւորութիւնները , այն ալ ո՞ւր , զինքը ճանչցող , մեծարող ու պատուող ընդհանուր Հայ բազմութեան մը դիմաց :

Ի՞նչ կըսէք Մասիս , Մեղու , ձեր այն ցրցուցած խարդախութիւնները այն օրէն առաջ կար , եթէ կար , ինչո՞ւ հրատարակել կամք չըրիք , ինչպէս որ հիմա ըրիք ու կրնէք :

Արդեօք այս 6,700 քէսէ պարսքը յիշեալ թուականէն ետքը լսեցիք , թէ չէ առաջ դիտելիք : Եթէ գիտէիք ինչո՞ւ այն ատեններ կերպիւ մը Ազգային Արքեպիսկոպոսի Արշութեան չի ծանուցիք : Եւ կամ հիշ որ չէնէ՞ այս դուռ մարը որ (ի հարկէ Երուսաղէմ) վասնելովն Ազգին և Անքին կրած սոսկալի մատը որդիական խոնարհութեամբ մը իրեն իմաց ապիլք , որ առեն որ յաճախ Երուսաղէմստուն այցելութիւն ըրած իւր արժանաւորութեանը կը ներկայանայիք : Այսինք այն ատեն նորին յարգութենէ ի՞նչպիսի պատասխաններ կրնդունէիք . . . : Հա՛ն և շա՛տ ասիլիք պատեց խառն լիակամքազիրներ : Այնչափ մա՛ն Երուսաղէմի ինչ և ինչ , Փետրուար 16ին Սուրբ . 17ին ժամը ութնէ ետքը Ի՞նչ , չէ՞ , ատանկ վայրկեական խիստ զարմանալի փոփոխութիւն մը գիւրութեամբ չի հաւատացուիր , և առանց բա՛նաւոր պատճառի մը չընդունուիր : քանզի ետքը ըսողն ալ , դրողն ալ , կարդացողն ալ ու հաւատացողն ալ խնթ եղած կ'ըլլայ :

Ի՞յ ի՞նչ ըսենք , հիմա արդեօք այս յանկարծական փոփոխութեան դիմաւոր պատճառ մը չի կայ : Այո կայ պատճառ . ի՞նչ , ահ այն

Կերեւի որ այս ալ Արքեպիս մէկ մեծ խարդախութիւնն է , որ ընթերցողք այս հաշուին մէջ չիւթին . քանզի իւր այս ցրցուցած հաշիւը ըստ թուաբանական կանոնի վեց հազար եօթը հարիւր կը կարդացուի . բայց լսածնուս իր ինչայնորեալ մտքով վեց կամ եօթը հարիւր ըսել կուզէ ելլեր , որ թուանշանով կը գրուի սա կերպ 6-700 , որ ինք գրեր էր 6,700 , որ ինչպէս ըսինք կը կարդացուի վեց հազար եօթը հարիւր : Ահա այս բանս ուղղակի Սեղոսին Սահակ վարդապետին դէմունեցած անմարելի ատելութեան մէկ մեծ եւ յայտնի արարոյցը կրնայ համարուիլ : Ըսենք թէ առաջին վերնալէք , ինչո՞ւ երկրորդին չ'ուղղեց :

ՆԵՍԻՄ ԱՆՈՒՆ ՀՐԵԱՅԻ ԱՆՅԻՐ

Շարունակութիւն եւ վերջ:

(ՏՄ ԹԽ 23 և 26).

Այս Նէսիմական ամենազօրաղ անձրին վրայո՛ր՝ գոր օրագրոյս 25-26 թիւերովը ըստ բառական խօսած էինք, այս անգամ համառօտ՝ բայց ազգու վերջաբանութիւն մը ընելով դադրեցնեմք այս մասին մեր քննադատութիւնները:

Ինչպէս որ տեսնուեցաւ այն նորածին *ուսուցիչ* եւ նորաձայն Աստուածաբան Տ. Յովնանեան քահանային վերջին խրատն ու պատուերը դէպ 'ի Նէսիմ Հրեային, (տես Արեւելեան դար թիւ 26 էրեն 222): արդ այժմ լսեմք յիշեալ Նէսիմին պատասխանը առ Տ. Յովնանեան: — Տղան դարձաւ ու ըսաւ թէ — կրսէ փարիզի նամակը. «Դիտեմ այդ Աստուածային պատուերը, բայց ես հայրս ու մայրս Աստուծմէ ետքը կը պատուեմ ու կը պաշտեմ, եւ նոքա իմ հոգիս չեն կրնար փրկել, եւ կը հաւատամ թէ Փրկիչ մը որ պիտի գար, եւ նա եկած է, որուն հաւատալով Քրիստոնեայ պիտի ըլլամ ու մկրտիմ, եւ արքայութեան փառացն արժանանամ եւ այլն»: Ինչ լուսափայլ պատասխան, եւ ինչ սքանչելի խոստովանութիւն: Պատասխան մը, գոր միայն ճշմարիտ եւ բարի քրիստոնեայ մը անպատրաստից եւ անկեղծաբար կրնայ տալ. խոստովանութիւն մը, գոր հագին Քրիստոնեական Ս. Կրօնի սիրոյն հրովը վառեալ մէկը կրնայ արտասանել:

Այս տեղ վարկեան մը մեր դիտողութիւնը սա Հիւնքեար պէյեհտեանի պատուերին, եւ Նեսիմի պատասխանին վրայ դարձուցնեմք:

Տ. Յովնանեանը կ'ըսէ. — նախ պետք է ծնողած հպատակիլ — որ սխալ. Նեսիմը կը պատասխանէ. — նախ սիրել զԱստուծո՛ւ, որ է ուղիղ:

Առաջինը վերջին աստիճան սխալման խաւարին անդունդը կընկղմի, երկրորդը յետին ճշմարտութեան յայտնը կը փայլի: Մէկը կը քարոզէ մարդկային նկատմունք, միւսը կը դառնի Աստուածային ճշմարտութիւն: Մէկը կը խորհի անցաւոր փառք, իսկ միւսը՝ յաւիտենական կեանք: Մէկինը ամենաուղիղ քրիստոնեութիւն, միւսինը չէմք գիտեր ինչութիւն:

Վերջապէս խրատն Նեսիմական, պատասխանը Տ. Յովնանիսական . . . :

Այ ուրիշ ինչ կրնամք հետեցնել, եւ ինչ կերպ տրամաբանել, բող 'ի Ս. Դիրս ուսեալ խոնական

քրիստոնեայք որոշեն, վնասն ու այնպէս մեզի իմացնեն:

Մինչեւ ցայս վարկեանը օրինաւորապէս կատարուած եղելութիւնները չեն կրցեր դէռ. գոն ընել եւ համագել այն քրիստոնեայ քննիչները, որ այն անմիջապէս առնեն զհին մարդը, որ պիտի կորսուի, եւ տանին զնա դէպ 'ի նոր մարդն, ուր պիտի փրկուի: Մերկացնեն զայն հին օրինաց զգեստներէն, եւ զարդարեն նոր օրինաց անբիծ եւ փայլուն հանդերձներովը:

Փոխանակ հին քրիստոնեան, նոր եւ փրկարար ջրով Մկրտեն զնա: Փոխանակ անապատական հին եւ նիւթաւոր Մանանայի, Քրիստոսական աննիւթաւոր եւ անապական Մարմնոյ եւ Արեան հաղորդակից արասցեն . . . : Բայց ինչ կըսեմք, դէռ այս բաները կատարելուն ժամանակը չէ հասեր:

Անիմանայի խնդիր:

Տղան Բ. Դուռը խրկելով՝ ըստ քաղաքական օրինաց հարցութիւնները ըլլուելէն, եւ անկէ վկայութիւն ու արտօնութիւն առնուելէն, Պատրիարքարանի մէջ Հայոց եւ Հրեից միաբան ներկայութեամբ՝ առանձին եւ հրապարակաւ, ժամերով, օրերով քննուելէն յետոյ՝ չէմք կրնար գիտնալ թէ ալ ինչ բան պետք էր, որ 'ի գործ դրուէր, կամ ինչ մնացեր էր անդին որ կատարուէր:

Ըստ մեզ մինչեւ անգամ չափն ալ անցնելով, դէռ ինչ խորհելու կէտեր կար այս խնդրոյն մէջըն որ՝ մեր Հայ քննիչներուն սիրտը չէր հանդարտեր: Դարձեալ կ'ըսեմք եւ յաւիտեան պիտի ըսեմք, խեղ չի հասնէ ինչ բան: Արդեօք ոմանց ըսածին պէս . . . բայց բերնով ըստած խօսքերուն առ այժմ հաւատք չընծայեմք, զի այն անտեղեկ քննիչներուն բանը (Հոգեւորապէս) խիստ ձախորդ է. մենք սա նամակին վերջին խօսքերուն դիտողութիւն ընենք:

—Արդ այս բաները կատարուելէն ետքը, կ'ըսէ սոյն նամակագիրը, տղան ժամկոչի մը հետ դրկեցին որ խայտը հանելով Մէճիսիլէն փոխեն: Ինչո՞ւ համար Աղաներս, Քահանաներս, այս ինչ հարկի: Ներեցէք համարձակութեանս այս հարցումը ձեզի ընելու. վասն զի մէկ ուրիշ անձ մէն ալ՝ այս կամ ասոր նման դիպուածով Պատրիարքարան եկած, եւ Հայութիւնն ընդունած ժամանակ, հարկ չէր եղած նոյն հետայն զայն, եւ կամ նաեւ անոր տեղը ուրիշ մը դրկել, այլ մինչեւ անգամ տարիներով առանց Մէճիսիլէն փոխուելու մնացեր էր:

էն այն մարդուն գալեն 'ի վեր երեք Պատրիարք փոխուեցաւ, զեռ. անոր Մէջիւրիշէն չի փոխուեցաւ: Կըլլայ եղեր: Այս: Ուրեմն . . . : Այս ալ վերնա ջուրի. քաջ Նէսիմը ասոր ալ յաղբեց, իսկ այժմ անոր անյաղբելի եւ վերջին դժուարութիւնները նկատեմք, ու այնպէս վերջ տամք խօսքերնուս:

Հստ աստեքեան նամակին, այս գործին մեջ տղուն 17 տարեկան, որ ըսել է Խեյանաս ըլլալը հաստատուելով՝ եւ այս կողմէն ալ փութիւզ մը չի մնալը տեսնուելով, ժամկոչը ուրախութեամբ տղան հետը առած կուգայ Պատրիարքարան, եւ կը յանձնէ զանի որի որ պետք է: Աւանդ, բշտառութեանս, այս վայրկեանէս «ամենայն ինչ կատարեալ է» ըսելով, ըստ օրինի Քրիստոնէութեան, անոր պետք եղած՝ հաւատոյ հրահանգները ուսուցանելու տեղ, (կերեւի որ բշտառ Նէսիմին իր նախատագիրն է եղեր), նամակին գրածներուն նայելով, Հրեից քեյաղբութեամբ տղան վերստին Բ. Դոնէն ուզուելով, գալիւ քեանեանս ալ նոյն հետայն կ'առնէ զայն ու կը տանի, եւ կ'ըսեն քե, կ'ըսէ նամակը. տղան Մ. Դամանտօին տարուի եւ անոր առջեւն ալ թագրիւ տայ . . . : Այս ինչու, ինչ պատճառի: Այս կետիս կրօնական ջերմ գգացմունքներով բորբոքեալ, եւ Ս. Հաստոյս նախանձախնդիրն ելած՝ դեպ 'ի երկինք կը բողոքեմ. քանզի այս խնդրոյն նկատմամբ ալ (երկրային) դատաստարանները դադրեցաւ. օրինաց գրքերը գոցուեցաւ, դատաւորները քաշուեցան, իրենց վերջին վճիռները տալով. իսկ այժմ նորանոք . . . : Հրեից քեյաղբելն, ըսենք քե բնականաբար կրնայ ըլլայ, իսկ տղան Բ. Դոնէն նորէն ուզուի. կարծեմք հաստալի բան չէ, զի նամակին սկիզբէն մինչեւ վերջը գրածներէն կը տեսնեմք որ, Նեսիմին վրայ հարկ եղած այն ամենայն Տերութեան եւ քաղաքական օրէնքները ճշդիւ կատարուէր, զանի Քրիստոնէայ ընելու բացարձակ արտօնութիւններն նոյն Բ. Դոնէն իսկ եւ իսկ տրուէր, դարձեալ Հրեաներու կողմէն չափէն եւ չափէն աւելի հարձու փորձերը եղեր է. ուստի տղան Ս. Առաքանին մեջ մըտնելու ատեն՝ Հայերը զանի միս մինակ Հրեաներու ձեռքը տայ, ու Դուռը դրկել, եւ անտի Մ. Դամանտօին ձեռքը յանձնել ինչ օրէնքի հրաման, կամ ինչ մարտութեան ծառայել է: Այս ալ մեկդի: Տղան— Մինչ Թրանկօ Էֆենտիին առջեւ կեցած կը պօռայ, կուլայ, կը պաղատի ըսելով քե՛ Քարբարոս ազգերու եւ կռապաշտից ձեռքը մատնեցէր զիս որ չարճարուիմ, եւ իմ նոր հաւատքս

պաշտպանեմ, ու Հրեից ձեռքը մի յանձնէր, եւ Քրիստոնէութեան Ս. Քրիստոս Աստուած կը պաշտեմ, բայց . . . բայց խողջը գտնուիր:

Սարաափելի տեսարան:

Ահա սա ածընցած կեցցէներէն, հոս մեկ կեցցէ մըն ալ մենք տանք:

Կեցցէ Քրիստոնէութիւն, ու հետը լուսաւորութիւն: — Պէտտամ դուռն ալ, ինչ կըլլայ եղեր, թող մէկ Հրեայէ դարձած Հայ մը պակաս ըլլայ . . .

«Աղեկ, աղեկ, միտքդ պահէ առ խօսքերդ. եթէ որ անոր հոգին կորան, անդին քեզի հետ կը տեսնուինք»:

«Վերջապէս (տղան) կ'առնեն կը տանին (Հրեաները): Ո՛ր: Ան չիյտեմ, զնա Փարիզի նամակագրին հարցու:

Արդ այս նամակին վերջը փարկը իւր կողմէն քանի մը խօսք ընելով «Այս պատմութենէն կը տեսնուի քե՛ կ'ըսէ. մեծ զգուշութեամբ եւ աղատամտութեամբ վառուած է Ազգը». (ոչ ազգը, այլ քննիչները): Ասոր ետեւէն «(Ազգը) իր մոլեռանդութիւն ջունենայն արեգակն պէս կը փայլի այս դեպքին մեջ» կըսէ ու կ'ըսէ: Ետքը տող մը վարը կելլէ Ազգը մատնից կը կոչէ, եւ վերջապէս դեռ ուրիշ այն կերպ բաներ կը խորհրդածէ, որ եթէ զանոնք մեր քննութեանը ներքեւ առնենք, չեմք գիտեր ինչ բաներ . . . : Ուստի Փարիզի խմբագրէն կը խնդրեմք, որ սա վայրկեանը Ս. Առաքարանը եւ գործը Առաքելոցը մեկ ձեռք, այս Նեսիմական դեպքը միւս ձեռքը՝ ուղի ուղոյ մեկ մեկու հետ բաղդատէ, եւ այնուհետէ մեզի խմացնէ քե՛ այս գործին այս կերպարանք ստանալուն պատճառը մարդկային պարտոց զանցառութիւն է մի, չէ նէ կրօնասիրութեան յետին ծայր պակասութիւն . . . :

ՀՐԵՏՈՐԱԿԱՆ

ՆՈՐ

ՏԵՏՐԱԿ ՄԸ

ՏԵՍՈՒԹԻՒՆ 185 ԹԻՒ

ՄԵՂՈՒ ՀԱՆԴԻՍԻ

ԵՍՍ մակագրով 60 երեսէ բաղկացեալ Տեարակ մը 'ի լոյս ելաւ այս օրերս, Նեսիմի քեանէն ինչ ստորագրութեամբ. յիշեալ Տեարակ

մեզի անծանօթ, քաջ և արթուն Հեղինակը որքան կարողացել այս գրութեամբը Մեղուի ամենատոյգ ճշմարտութիւնները երևան հանելու ջանացել, և զանոնք յայտնի փաստերով հաստատել է. որով ի հարկէ մինչև ցարդ Երևակին, Երևելեանին ու այլոց Մեղուի համար հրապարակաւ բոլոր ըսածներնին սուտ ելելով խայտառկուած կը համարին հասարակութեան զխմաց:

Ուստի աշուրնին յոյս խմեն անոնց, որոնք խունկերով մոռնելով կը պաշտեն զՄեղուն մինչև անգամ «անոր ուղուրին գլուխին կը զոհեն» և իսկ անգին խեղճ Մեղուն խապար չունի այս բանէն:

Տեղակին զինն է ընդհանրապէս 3 դահեկան. իսկ Մեղուաւորներու համար 3000 զուրուշ. այս նոր ելած մէկ հաշիւ մըն է:

Խմբագիր-Տնօրէն
Մ. Գ. ՏԵՅԻՐՄԵՆՅԱՆ

ԼՂԴ ՏՊԵՐԻՉԻ

Այլ լսեմք որ՝ բարեսէր անձինք ունանք* մեր ապա՞ծ որ և է յօգուածները իբրև իրենց գործիք մը ընելով, և մեզ իբրև կողմնակից մը կարծելով, անհիմն զրպարտութիւններ կը տեղաշարժեն մեր գլխուն. ուստի՝ ստիպեալ ի բռնադատութեանց, պարտ անհրաժեշտ անձիս վարկայ քանի մը խօսք ընել, որով ան անձանց սիրտերը խաղաղելով՝ որչափ որ կարելի է զերծ մնանք ի վնասակար կայծակմանց:

*Ասանք ան աստիճանի հասարակ մարդիկներ են որ, ոչ Ազգը (Կեդրոնական վարչութիւն) զիրենք կը ճանչնայ եւ վրանին համարում ունի, եւ ոչ իրենք Ազգը. եւ ոչ ալ Ազգը իրենց կերպով մը արտօնութիւն եւ պաշտօն տուած է Ազգին վերաբերեալ գործերու խառնուիլ. Սիրելի, քեզի բարեկամաբար կը խոստովանեմ որ Ազգային ասանկ ամենապիտուկ խնդիրներու մօտալը՝ ինձի եւ քեզի պէսներու չէ մընացած, մեր խօսելովը մէկ բան չըլլար. մենք մեր գործին նայինք, ու միայն Ազգին եղած բարեկաւութիւններէն ուրախանալով, որ բոլոր Ազգայնաւ եւ Յարգելի ժողովականք, ուսումնասիր եւ գիտնական Լրագրապետ եւ Օրագրապետք, եւ Յարգի անձնանուէր պաշտօնատեարք անխնայ ջանիւք Աստուածսիրաբար եւ բարեպաշտաբար կ'աշխատին:

Երգէն գիտեն հանճարամիտ անձինք թէ՛ ո՛ր կ'աշխատայ Տպարանի մը օրէնքը՝ այսինքն՝ ազատ է ամենայն կերպիւ որ և իցէ նիւթ տը պաղրելու. միայն թէ բաւական է որ՝ ընդդէմ Քաղաքականութեան և Եզգի մը մէջ խռովայ յոյզ շանթեր յարձակելու առթիւ մը տեղի տուած չըլլայ. բայց կ'ուզեմք աւելի համոզել ամեն անոնք, որոնք կրկին անգամ մեզ՝ բամբասանազլտորեւ տեղի չունենան:

Ըսինք թէ ազատ է Տպարան մը, ամեն նիւթ տպելու, բայց ի՞նչ. միթէ Տպագրիչ մը զանոնք տպելով՝ նոյն գրութեանց ոգւոյն հետ յարաբերութիւն մը ունեցած կ'ըլլայ. Ե՛տ այս է ծուռ դատողութիւն մը. ահա այս է ծանծաղամտութիւն մը. նա մանաւանդ որ՝ Տը պաղրիչ մը առանց կողմնակցութեան պէտք է չեղող կենալ. և ահա մենք ալ զասոնք գիտնալովն, պարտաւորեալ եմք չի շեղել սոյն ընթացքէն, և ձեռքէ չի թողուլ խոհեմութիւնը, ինչպէս որ մինչև ցայժմ ըրած եմք. Եսոր համար թող վկայեն ճշմարտախօս Եզգասէրները:

Երգ յուսամք թէ՛ ինչ ըսել ուզենիս կրցանք հասկըցունել, այն խելքի տէր եղողներուն, որոնք ասոր նման ամենաուշիւ խօսքեր կ'ստեղծեն իրենց գործիք կամ զբօսանք մը սեպելով:

Եսան կը խնդրենք և կաղաչենք ամեն այն պատուաւոր բարեկամներնէս թէ՛ ասանկ անտեղի շաղկապութիւններու ականջ չի կախելով, ինչպէս առաջ՝ դարձեալ հիմայ, իրենց սերն ու համակրութիւնը եւ և պաշտպանութիւնը մեր վայէն չի վերցնելով երեսէ չի թողուն:

Ազգին դէպ ի բարեկաւութեանը՝ Ներքն մեզ քիչ մը խիստ խօսնելու. եւ ով է որ տղիտութեան խաւարին մէջ ընկղմած՝ այսպիսի իր գիտն վեր ծանր գործերու ձեռնամուխ եղած է. սպասեմք եւ տեսնեմք թէ՛ ասոր արձագանքը ո՞ր կողմէն պիտի դայ:

Այս բաժնիս միայն մեր վրայ քանի մը խօսք տեղալուն՝ համար չէ, այլ շատ անգամ ինչպէս կը լսեմք, ոմանք չարաոգի անձինք, Ազգին գործնական խօսքերուն խառնուելովը բարեսէր հասարակութեան մէջ չար որոմներ կը ցանեն. եւ ահա այս է բուն իսկ գէշութիւնը, որ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՐՈՒՔՅԱՆ

ԿՕՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՆՏԱՆՃԵԼԱՐ